

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆԻՆ ՀԱՅՈՅ ԱԴԵՔՍՈՆԴՐԻՈՅ

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ ՎԻՃԱԿԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ


ՍԱՀՄԱՆԵԱԼ ԱԶԴ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿ. ԽԱՂԻՆ ԺՈՂՈՎՔԻՆ

ՏՊԱՐԱՆ «ՐԱՖՖԻ»

ԱԴԵՔՍՈՆԴՐԻՈ

(ԵԳԻՊՏՈՍ)



1907

Ե
195

364

44

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԱԴԵՔՍԱՆԴՐԻՈՑ

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ՎԻՃԱԿԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ

ՍԱՀՄԱՆԵԱԼ ԱԶԳ. ԿԵԴՐՈՆՈՒԹԻԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿ. ԽԱՌՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ՏՊԱՐԱՆ «ՐԱՖՖ»

ԱԴԵՔՍԱՆԴՐԻԱ

(ԵԳԻՊՏՈՍ)

1907

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ

Աղեքսանդրիա

15 Յուլիս 1907

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ
ԹԻՒ 1

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ . Կեդր . Վարչութեան Պատկ . Խառն
Ժողովոյ հրահանգաց համաձայն՝ Աղեքսանդրիոյ
Թեմական Ժողովի ընտրութիւններ կատարելու պաշ-
տօնով լուս օրինի կազմուած Ծնուրողական Ժո-
ղովս, իր առաջին նիստին սէց իսկ՝ միաձայն՝
թեամբ պատշաճ դատեց՝ իր ընտրողական նա-
խապատրաստութեանց առաջին քայլ՝ ճանօրացնելը
Աղեքսանդրիոյ արդոյ հայ հասարակութեան այև
կանոններն և օրինական տրամադրութիւնները
որոնց համաձայն տեղի պիտի ունենան այսու-
նեւու մէր թեմին վարչական և ընտրական բոլոր
գործողութիւնները, և որոնց չնորմիր Եզիպտոսի
ամբողջ առաջնորդական վիճակը կօժտուի վեր-
ջապէս առանձնայառուկ միաձայլ կազմակերպու-
թեամբ մը՝ հիմնուած Ազգային Մահմանադրու-
թեան ընդհանուր սկզբանց վրայ և պատշաճեցուած
տեղական հանգաւանքներուն:

Առ այս Ժողովս կը փուրայ ի լոյս ընձայել
Ազգ . Կեդր . Վարչութեան Պատկ . Խառն Ժողովնե
սէր վիճակին համար սահմանուած ՎԱՐՉՈՒԿԱՆ
ՀՐԱՀԱՆԳՔ՝ անոր սկզբքը դնելով հան Ա. Բ.



1-195 առ

և. Երեք յարսկից վաւերադրելու սրբնիք, բաց
ի իրենց պարունակած կարեւոր մեջնորիններէն
և կարգադրութիւններէն՝ ինքնին այս վարչական
վերադրվութեան օգտաշատ գործին հիմնաբարը
և պատմական յիշատադրանիր կը կազմեն:

Հիմա որ Մղերսանդրիոյ Հայ Հասարակու-
րիւնը՝ Կեդր. Վարչութեան պատրաստուած և
գործադրութեան հրամայուած այս Վարչական
Հրամանգին մէջ կը գտնեն այլին պատրումը իր
այլքան առիրենուի միանամուռ արտայա-
տած բաղձանքնեւուն, վատան ենք որ՝
անխառն բերկրութեամբ պիտի ողջունեն զայն, և
ամեն որ իր կարգին կատարեալ օրինապահու-
թեամբ, խոհեմութեամբ և համերաշխորթեամբ
պիտի ցանայ դիրքացնել շոշտով իրադանացումը
այս ազգօգուտ գործին, որ արդարի բարգաւա-
ճումի և միաբանութեան նոր բորսկան մը կը
խոստանայ բանալ Եգիպտոսի Հայ գաղաքին
համար:

Առաջնորդ Եգիպտոսի
Նախագահ ԷՅտրող. Ժողովոյ
Մհրթհ Ծ. ՎՐԴՊ. ԱՂԱԽՈՒՆԻ

Ա.

Աջ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԳԻՐԸ
ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՐԻՎՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՅ

Կ. ՊՈԼԻՍ

5 Մայիս 1907

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ.

Ազգ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ 97

ԳԵՐԱՉՅՈՐԾ Տ. ՄԱՐՏԻՀ Ծ. ՎՐԴ. ԱՂԱԽՈՒՆԻ
ԱՌԱՋՅՈՐԾ ՎԻՃԱԿԻՑ
ԵԳԻՊՏՈՍԻ

Եցիպտոսի ազգային գործերը տեղական հանգա-
սանաց համաձայն օրինաւոր ուղղութեան մէջ զնելու
և ըստ այնմ Գաւառական Վարչութիւնն կազմակերպե-
լու համար շատոնց ի վեր զգալի եղած էր Սահմանա-
դրական յատուկ Հրահանգի մը պէտքը, որ հիմունա-
լինելով հանդերձ Սահմանադրութեան ոգույն և սկզբանց
վրայ Կարենար միանգամայն պատշաճիլ Եգիպտոսի
վիճակին բացառիկ դրից և գոհացում տար անոր պէտ-
քերուն:

Այս վերջին ժամանակներս Աղեքսանդրիոյ
մէջ ծագած թեմական զանազան խնդիրներն և տեղի
ունեցած իրողութիւններն աւելի անհրաժեշտ հարկ մը
յառաջ բերին վարչական կազմակերպութեան գործն ի
գլուխ հանելու, և Ազգ. Կեղրոնական Վարչութիւնն

յանձնած լինելով Բարձր. Պօղոս Նուպաշ Փաշոյի ու
սումնասիրել իրաց վիճակն և պէտք եղած ծրագիրն
պատրաստել, Խառն Ժողովն Եորին Բարձրութեան
կողմէ մատուցուած ծրագիրն նկատողութեան առաւ, և
անոր սահմանած սկզբունքներն օրինաւոյ և ընդունելի
գտնելով, ընդունեց ծրագիրն, և հետևաբար ծրագրին
սկզբանց վրայ՝ սահմանեց Վարչական Հրահանգ մը
Եփակտուի վիճակին համար, գործադրութեան հսկո-
ղութիւնը յանձնելով գործեալ Եորին Բարձրու-
թեան խնամոց և հոգածութեան:

Ահաւասիկ նոյն Վարչական Հրահանգն ներփակեալ
կուղարկենք Զեր Գերապատուութեան և կը յանձնաւ-
րաբենք որ Ն. Բարձրութեան հետ բանակցութեամբ և
անոր խորհրդոց համաձայն ձեռնարկէք նոյն Հրահան-
գով սահմանուած վարչական մարմինները կազմակեր-
պելու իրենց բոլոր ճիւղերով, ստանալով թէ՛ Գահիրէի
Քաղաքական ժողովին և թէ Աղեքսանդրիոյ Թաղական
Խորհրդին գործակցութիւնն, և վիճակային գործերը
դնելով այն վարչական ուղղութեան մէջ զոր Հրա-
հանգը կը տրամադրէ, փութաբ տեղեկագրել մեզ կա-
տարուած ընտրութիւնները՝ ըստ օրինի հաստատուելու
համար:

Հարկ չէ ըսել թէ այս մտօք գրուած է կարեռը
նաև Բարձր. Պօղոս Փաշայի և Աղեքսանդրիոյ Ատե-
նապետ Վսեմ. Աբրահամ Բարթող Փաշայի, որոց հա-
ղորդուած է նաև մի մի օրինակ Հրահանգէն:

Մասմբ աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
(Ստոլ.) ՄԱՂԱԶԻԱ ԱՐՔ.



Ա. Տ Ե Ն Ա. Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ

Ուրբաթ, 7 Յունիս 1907

Ի՞նդ նախագահութեամբ Գեր. Տ. Մկրտիչ Ե.
Վարդապետ Աղաւնունիի, Առաջնորդ Եզիպտոսի, և
Ատենապետութեամբ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի,
գումարուեցաւ Աղեքսանդրիոյ ազգայիններու ժողով մը
որուն ներկայ էին.

Վսեմ. Միհրան Խան Գալֆահան

Արթին Պէյ Բէիզեան

Միքայէլ Պէյ Բէիզեան

Վստուր Պէյ Շէրիտճեան

Ազն. Տ. Գէորգ Սարգիսեան

Տօբթ. Ժամկոչեան

Յակոբ Իզմիրլեան

Գէորգ Իփէրեան

Տիգրան Լամսարական

Միքայէլ Կիւրճեան

Գէորգ Մէրամէթճեան

Գառնիկ Զպուցճեան

Միհրան Ցամատեան

Պերճ Օհանեան

և Յարութիւն Մանուկեան:

Խոկ Հրաւիրեաներէն զբաղման պատճառաւ բա-
ցակայ գտնուած են. Վսեմ. Աբրահամ Փաշա Բարթող և
Տեարք Անտոն Արթինօֆ, Սահակ Աբրահամեան, Վահան

Խորասանճեան, Արմենակ կամսարական, Կարապետ Մելքոնեան, Լեռն Մկրտիչեան, Յարութիւն Մօրուքեան, Յովհաննէս Շնորհբեան, Լեռն Պէրպէրեան, Արամ Արշակեան, Տօբթ. Թէօփիլ, Յակոբ Ուղուքեան և Լեռն Նիզամեան:

Առաջնորդ Հայրը ատեանը բացուած հոչակեց ժամը 11 ին և յայտարարեց թէ կ. Պօլսոյ Ամեն. Ալբազան Պատրիարք Հօր կողմէ Նորին Վասնութիւն Պօղոս Փաշա Նուպարի ուղղուած պաշտօնազրի մը վրայ, թելաղութեամբ Նորին Վասնութեան՝ ժողով հրաւիրած է այսօր Աղեքսանդրիոյ ծանօթ ազգայիններէն իրը 28 անձինք, որոնցմէ ներկաներուն իր շնորհակալութիւններն ուղղեց հրաւէրին պատասխանած ըլլալնուն համար:

Ապա խօսք առաւ Վասմ. Պօղոս Փաշա Նուպար և հետևեալն ուղղեց ներկայ ազգայնոց.

«Տեարբ»

«Նորին Ամենապատութեան կ. Պօլսոյ Պատրիարքին կողմանէ քանիցս կրկնուած փափաքին համաշեկելով, ընդունեցայ Աղեքսանդրիոյ ազգային գործոց միջամտել, հոն յառաջ եկած դժուարութիւններն «Հարթելու և ձեզ բաժնող երկառակութիւններուն վերջ տալով լուծման մը յանգելու համար: Յօժարութեամբ յանձն առի այս պաշտօնը, նաև մանաւանդ շատ լաւ յիշատակ մը պահած ըլլալուս համար այն տառիներէն երբ Աղեքսանդրիա կը բնակէի ուր ձեր

«Վստահութիւնը վայելած րւլալով Աղեքսանդրիոյ Ազգ. «Վարչութեան ատենապետութիւնը ինձ յանձնուած էր: «Ինչպէս որ արդէն յայտարարած էի ձեզ, վեր «Չին ընտրութիւններն՝ սատ իմ կարծեաց՝ օրինաւորապէս կատարուած չըլալով, ունէ զիմում չէի կրնար «Փորձել՝ մինչև որ այդ ընտրութիւնները չջնջուէին: «Աղեքսանդրիոյ ժողովուրդը զայս հասկնալու լմասութիւնը ունեցաւ, ինչ որ գիւրացուց գոհացուցիչ «արդիւնք մը ձեռք բերելը, որ այսօր ձեզ պիտի հաւարդեմ: Աղեքսանդրիոյ Նորին Ամենապատութեան «գնահատել տալ ձեր թեմին մասնաւոր զիրքը, որոյ «անցեալին մէջ վայելած տեսակ մը վարչական անհամար կախութիւնը մինչև աստիճան մը իրաւունք կուտար «ապագային համար ալ մասնաւոր կազմակերպութեան մը: «Ազգ. Կեղրոնական Վարչութեան Խառն Ժողովը «նպաստաւոր ընդունելութիւն ընելով զիմումիս և ի «նկատի առնելով յառաջ բերած փաստերս, հաճեցաւ «սահմանել հրահանգներ զորս ուրախ եմ ձեզի հաղորդելու և որոնք ձեր թեմին նոր կազմակերպութեան «հիմը պիտի ըլլան:

«Ինչ որ արդէն գոհունակութեամբ հաստատեցի, «դուք ևս պիտի տեսնէք թէ կ. Պօլսոյ Խառն Ժողովը «այնպիսի կազմակերպութիւն մը կը չնորհէ ձեզ որ «յուսամ թէ ամճնուն գոհացում պիտի տայ և Աղեքսանդրիոյ Հայ հասարակութեան մէջ խաղաղութիւնը «և միաբանութիւնը պիտի վերահաստատէ:

«Այս նոր կազմակերպութիւնը Եղիպտոսի առաջ

«Նորդական վիճակին մըութիւնը պահպանելով հանդերձ,
«կատարեալ անկախութիւն և ինքնօրինութիւն կը շնորհէ
«ձեզ, առանց Պահիրէի թեմին հետ ձեր ունեցած կա-
«պերը խզելու: Արդարի ցաւալի պիտի ըլլար եթէ
«տեսակ մը հերձուած յառաջ գար Եզիպտոսի Հայոց
«մէջ, որոնց բարգաւաճումը և յառաջդիմութիւնը սերտ
«համերաշխութեան և համաձայնութեան պէտք ունի:

«Քաղցը է ինձ յուսալ թէ Աղեքսանդրիոյ հայ
«ժողովուրդին համար միաբանութեան շրջան մը կը
«բացուի ասով և ի խորոց սրտի մաղթանքներ ընելով
«անոր բարգաւաճման համար՝ ահա կը հաղորդեմ ձեզ
«Պատրիարքարանին Հբահանգները»:

Յանձնարարութեամբ Նորին Վահմութեան, Առաջ-
նորդարանի դիւնապետը կարդաց յօդուած առ յօդուած
և. Պօլոյ Ազգ. Կեղր. Վարչութեան Խառն Ժողովին
ընդունուած և վաւերացուած Եզիպտոսի թեմին համար
գործադրելի Ազգային Վարչական Ծրագիրը»:

Սոյն ընթերցման աւարտումէն յետոյ ներկայը ի-
րենց ամսնախորին շնորհակալութիւններն յայտնեցին
Վսեմ. Պօլոս Փաշա Նուպարի որ բարեհաճութիւնն ու-
նեցած էր միջամտելու Ամսն. Ա. Պատրիարք Հօր մօտ,
և ինդրեցին Նորին Վահմութենէն որպէս զի շնորհ ընէ
ներկայ ժողովոյ երախտագիտական խորին զգացմանց
թարգմանը հանդիսանալ Նորին Ամենապատութեան
ըով:

Վերոյիշեալ հբահանգներուն Զ-րդ յօդուածին գա-
լով ժողովը՝ Նորին Վահմութեան Պօլոս Փաշայի ա-

ռաջարկութեան մ'րայ, և նոյն յօդուածի մեկնութիւնը
Նորին Ամեն. Սրբազնութեան վաւերացմանը ենթար-
կելով՝ կը նկատէ թէ ընտրողութեան համար յօդուածին
առաջին երեք պայմաններն անհրաժեշտ են առ հա-
սարակ բոլոր դասակարգերուն և թէ այդ երեք պայ-
մաններէն զատ՝ ընտրողները պէտք է նաև լրացնեն
յաջորդող երեք պայմաններէն մին:

Իսկ Զ-րդ յօդուածին այն հատուածը, որուն տրա-
մադրութեամբ ամէն ընտրող պայտի յիսուն զրուշ ողջ
Ազգային տուրք մը վճարել, մինչև ցարդ գործնակա-
նին մէջ գոյսութիւն չունենալուն, առ այժմ անկարելի
պիտի ըլլայ սոյն պայմանը գոհացնող ընտրողներ
գտնալ. ուստի ժողովը պարտը զգաց դարձեալ Ն. Վ.
Պօլոս Փաշայի բարեացակամ միջամտութեանը դիմել
որպէս զի գէթ այս առաջին ընտրութեանց համար
Պատրիարքարանը զերծ կացուցանէ ընտրողները յիշեալ
տուրքի վճարումէն: Վսեմ. Պօլոս Փաշա Նուպար,
ժողովոյ այս միահամուռ բաղձանքին վրայ յանձն ա-
ռաւ հեռազրաւ դիմել Ամեն. Ա. Պատրիարք Հօր,
խնդրելու համար որ, լոկ այս անգամուան ընտրու-
թեանց համար այդ բացառութիւնը շնորհէ, պայմանաւ
որ, յառաջիկային, ընտրութեանց մերարերեալ ամէն
պայմաններ, և ի մասնաւորի յիսուն զրուշ ողջ գու-
մարի տուրքը՝ կէտ առ կէտ պիտի գործադրումէն:

Նոյնպէս ժողովոյ բաղձանաց վրայ Վսեմ. Պօլոս
Փաշա յանձնառու եղաւ առաջին թղթատարով գրել
Ազգ. Պատրիարքարանին և ինդրել որ ըստ Հբահանգի

ընտրուելիք Քաղաքական ժողովոյ անդամոց թիւը
եօթի բարձրացուի, նշանակուած հինգը բաւարար չըւ-
լալով տեղական պահանջումներուն և գործերուն:

Յետ որոյ ներկայից առաջարկութեամբ և միա-
ձայն հաւանութեամբ Ընտրողական ժողով մը կազմուե-
ցաւ հետեւալ Պատ. անձերէն, պաշտօն տրուելով իրենց
շարժիւ և գործել ըստ նոր կազմական կանոնագրի և
ըստ հրահանգաց Ազգային Պատրիարքարանի:

Անդամք Ընտրողական ժողովոյ.

Վաեմ. Արքահամ Փաշա Բարթող
Տ. Տ. Միքայէլ Պէյ Բէկեան | Սոյն չորսը կազ-
Յակոր Էֆէնտի Աւուրեան | մնով նախորդ
Խաչիկ » Զաքէեան | Թագ. Խորհուրդը, և
անոնցմէ զատ նաև

Վաեմ. Միհրան Խան Գալֆաեան
Տ. Տ. Տօքթ. Մ. Ժամկոչեան
Գէորգ Խփէքեան
Յակոր Ազնաւորեան
Գէորգ Մարգիսեան
Միհրան Ցամատեան
Գերճ Օհանեան
Յովհաննէս Շնորհեան
Պահակ Արքահամեան
և Յակոր Խզմիրէեան:

Աստեանը փակուեցաւ ի ժամ 1 :

(Ատորակրութիւմք ներկայից)



ԱԶԴ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՍՍԱԽԱՆԻ
ԵՂԱՆ ՀԱՐՑՄԱՆՑ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒ

Ազգ. ԿԵԴՐ. ՎԱՐՀՈՒԹԵԱՆ ՊԱՏՍ. Խառն
Ժողովի առ Գեր. Վռացնորդ Հայրե ուղղեալ 134
համար և 14 Յունիսի ամսարիւ իր պաշտօնագրով՝
հայուեալ կերպով կը պարզաբանե սահմանեալ
վարչական Հրահանգին լուսարանուրեան կարօն
կետերը, միանգամայն իր բարձր հաձորիւնը
տալով Քաղ. Ժողովոյ անդամոց թիւը 7ի բարձ-
րացնելու առաջարկին .

«Ատացանք տարւոյ Յունիս 19 Ժուականաւ Զեր
«ուղղած զրութիւնը, և ընդ նմին Աղեքսանիմիոյ մէջ
«Զեր նախագահութեան և Բարձր. Պօղոս Փաշայի Ատե-
«նապետութեան ներքե գումարուած ժողովի մը ատե-
«նագրութեան օրինակն, որմէ տեղեկացանք որ այս
«Ժողովին հաղորդուեր է Նորին Բարձրութեան կողմէ՝
«Եզրապոսի վիճակին համար կեղը. Վարչութեան Խառն
«Ժողովոյ կողմէ սահմանուած Վարչական Հրահանգն և
«գնահատուելով անոր օգտակարութիւնն, Ընտրողական
«ժողով մը կազմուեր է գործադրութեան ձեռնարկելու
«համար.— միայն թէ՝

1. «Ծնտրողութեան պայմանաց վերաբերող հրա-
«հանգին Գրդ յօդուածը մեկնուելով այնպէս հասկցուեր
«է որ Ընտրողաց համար նշանակուած վեց պայմաննե-
«րէն առաջին երեքը պահանջելի են առ հասարակ

«ամեն դասակարգի ընտրողներէ, / սկ մնացեալ
«երեց պայմաններէն մին միայն պէտք է ուն են ան։—Նաև

2. «Բատ որում մինչև ցարդ Աղեքսանդրիոյ մէջ ազ-
«գային տուրքը չէ կրցած հաստատուիլ, և առ այժմ
«անկարելի պիտի լինի գտնել ընտրողներ որ ըստ հրա-
«հանգի տարին 50 դրշ. ողջ դրամ Աղջ. տուրք վճա-
«րած լինին, ուստի հարկ դատութիւն է հրահանգին նշա-
«նակած պայմանը այս առաջին անգամ ի բաց թողուլ
«և յառաջիկային գործադրութեան գնել անվլէպ։—

3. «Հարկ դատուեր է Քաղաքական Ժողովոյ ան-
«դամոց թիւը 5 էն 7 ի վերածել։

«Այս խնդրոյն նկատմամբ Բարձր. Պօղոս Փաշա
«ևս իր կողմէ կարեորն զրած և առաջարկած լինելով
«մեզ՝ Աղջ. կեղը. Վարչութեան Խառն Ժողովը նկա-
«տողութեան առաւ եղած առաջարկութիւնները, և ճիշդ
«գտաւ հրահանգին Գրդ յօդուածին նկատմամբ տրուած
«մեկնութիւնն և ընդունեց, ինչպէս ընդունեց նաև
«Քաղաք. Ժողովոյ անդամոց թիւը բարձրացնելու ա-
«ռաջարկն, և 5 էն 7 ի վերածեց։ Խակ տրոց վճարման
«պայմանին գալով, արդէն Բարձր. Պօղոս Փաշա կան-
«իսաւ առաջարկած լինելով մեզ վճարումը պայման
«չդնել այս առաջին ընտրութեան պահուն, սոյն առա-
«ջարկութիւնն ընդունուած և մեր կողմէ հեռազրուած
«էր նորին Բարձրութեան որ տուրքը վճարելու կա-
«րողութիւնն ու յանձնառութիւնը միայն պայման դրուի
«այս անգամ, ինչ որ Աղջ. կեղը. Վարչութեան
«Խառն Ժողովն ալ հաստատեց իր համամտութեամբ։» :

ՎԱՐՉՈՒԿ ԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ՎԻՃԱԿԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ

- 1.— Եղիպտաս միակ Աւաչնորդական վիճակ կը կազմէ Կ. Պօլայ Հայրց Պատրիարքութեան ներքի և մէկ Աւաչնորդի մը ձեռօք կը կա-
սովարուի։
- 2.— Եղիպտասի Աւաչնորդութեան կեղեսնը Գա-
հիրէ մայլաքալաքն է, բայց Աղեքսանդրիա
աւ Աւաչնորդանիստ կեղեսն է Աւաչնորդը
պարտաւոր է վախտակի երկու քաղաքներու
մէջ ընակիլ պարագայից համեմատ։
- 3.— Երկու քաղաքներէն գուրս գտնուած Եղիպ-
տասի հայտքնակ տեղերը երկուքէն մէկին
հետ կապտկցեալ պիտի նկատուին կառա-
վարչական յարտրերութեանց հիմամբ բաշ-
խուած։
- 4.— Եղիպտասի Աղջային Վարութիւնը կազ-
մակերպաւած է Աղջ. Սահմանադրութեան
ոկլբանց համեմատ, տարբերութեամբ այն
կէտերուն որ տեղական պահանջից հա-
մածայն սոյն հրահանգին մէջ պիտի նշա-
նակուին։
- 5.— Եղիպտասի Գաւառական ընդհանուր Ժո-
ղովը կը բազկանայ երեսուն և հինգ ան-

- դամներէ, որոց հինգը եկեղեցական և
երեսունը աշխարհական։ Աչխարհակաները
կէս առ կէս, այսինքն տասնեհինգական ան-
գամ զահիրէի և Աղեքսանդրիոյ երկու թե-
մերուն կաղմէ կընտրաւին։ Խակ եկեղեցա-
կաններէն երեքը զահիրէն և երկաքը Ա-
ղեքսանդրիայէն կանուին։
- 6.— Թէ զահիրէի և թէ Աղեքսանդրիոյ թե-
մերը զաւառական Ժաղովոյ լիչեալ տասնե-
հինգ անդամները կընտրեն իրենց բազարին
մէջէն։ Բայց այս թեմէն մաս պիսի հանեն
իրենց թեմին մէջ գտնուող հայաբնակ տե-
ղերուն, այն պարագային մէջ երբ այն տե-
ղերը գտնէ երեսուն ընտրալ անձ և մասուռ
մ'ունին։
- 7.— Ծնդհ. Ժաղովոյ եկեղեցական անդամներ
են երկու քաղաքներուն ծխտուէր քահանա-
ներուն երեցագոյնները, բաւական է որ
ծերութեամբ տնկարացած կամ օրինական
պատճառներով զրկուած չըլլան։
- 8.— Ծնդհ. Ժաղովոյ աշխարհական անդամները
կ'ընտրուին ուղղակի ժողովրդին քուէտրկու-
թեամբ, և սահմանադրական հրահանգին
ցուցուցած ձևով։
- 9.— Զահիրէի և Աղեքսանդրիոյ թեմերուն մէջ
ընտրող են հետեւեալ պայմաններու պատճա-

- Հ-ՊԾՀ
- խանող հայ ուղղափառ եկեղեցւոյ զաւակ
աղղայիններ, որոնք
- Ա. — Երեց կենաց քառնեհինդ տարին լրա-
ցացած են։
- Բ. — Տարեկան կէս Եզ. առկի աղղային առ բք
կը վճարեն։
- Գ. — Սահմանագրութեան 67 րգ. յօդուածով
նշանակուած զրկումներէն զերծ են։
- Դ. — Եղիպատուի մէջ ծնած և տեղացի են։
- Ե. — Երեք տարիէ ի վեր ընտանիքով Եղիպ-
ատական հաստատուած են։
- Զ. — Հինգ տարիէ ի վեր պետական պաշ-
տոնակ Եղիպատա կը բնակին և կամ տահ-
արական տուն հիմնած են։ (1)
- 10.— Գոււառական Ինդհ. Ժաղովը թէ համագու-
մար նիստեր կը գումարէ ի զահիրէ և թէ
իւրաքանչիւր թեմներուն անդամներով թե-
մական նիստեր կը գումարէ ի զահիրէ և
յԱղեքսանդրիա։ Նախագահութիւնը և Հրա-
փրելու իրաւունքը ամեն առթի մէջ Առաջ-
նորդին կը պատկանի։
- 11.— Երկաքանչիւր թեմերուն աշխարհական
-
- (1) Սոյն վեց պայմաններէն առաջին երեքը պահան-
ջելի են առ հասարակ ամէն ընտրողներէ։ Խակ այդ երեք
պայմաններէն զատ՝ բաւական է լրացնել յաջորդող երեք
պայմաններէն մին միայն ընտրողի համար ու մասնակի ու մասնակի համար։ (Տե՛ս Բ. և Գ. վաւերաթղթերում պէջ)։

անգամներուն մէջն կը նաքախն մէկ Ասե-
նապետ և մէկ Ասենառդովիք : Համագումար
նիստերու մէջ Ասենառդովիք կը փարէ
Գահիրէինը և Ասենառդովիք կը փարէ
Ազեքասնդրիստինը : Ասոնց բայց ակացութեան
փաստաբանաբար կը պաշտօնավարեն միւս
ները :

12. — Համագումար նիստերը կը գումարուին
հետեւեալ խնդիրն է թեան համարչ :

Ա. — Բնարութիւն Առաջնարդի:

Բ. — Բնարութիւն դաւասական երեսիստունի
Կ. Պօլսոյ կեդրոնական Բնդհ. Ժողովին :

Գ. — Բնարութիւն պատաւիրակի ընարողական
ժողովոյ Էջմիածնի, եթէ Պատրիարքարանէ
հրահանգ որուի:

Դ. — Առաջնորդին հետո տեղի անեցած ան-
համաձայնութեան կամ Առաջնորդին գէմ
տեղի ունեցած ամբաստանութեան նախա-
քնութեան և Պատրիարքարան տեղեկա-
գրէլու համար, կամ Պատրիարքարանի հրա-
հանգին վրայ:

Ե. — Առաջնորդարանի ելմտացոյցի կազմու-
թիւն:

Զ. — Գնումն կամ վաճառումն Ազգային կալ-
ուածոց:

Է. — Պետական կառավարութեան և Հայ հա-
սարակութեան միջն յարաբերութեանց կէ-

տերու կամ օրինական վովտիսութիւններու
նկատմամբ խորհրդակցութիւններ :

Բ. — Եղեգուսի տեղական գործոց և բարե-
պաշտամկան, կրթական և բարեգործական
հաստատութեանց մասին կազմուելիք հրա-
հանգներ, և այլ նմանորինակ խնդիրներ
որ Եղիսաբետի հայ ուղղափառ հաստարակու-
թեան ամբողջութեան կը պատկանին :

13. — Բնդհ. Ժողովոյ համագումար նիստերը
տեղի կանգնեան վերայիշեալ առիթներուն
պատահած տառեն: Ամեն առթի մէջ պէտք
է որ իւրաքանչիւր տարի գոնէ մէկ նիստ
գումարուի, և երկու թեմերուն գործերուն
վրայ աեղեկամիթիւններ տրուին և խորհր-
դակցութիւններ կատարուին:

14. — Գահիրէի և Ազեքասնդրիոյ թեմական նիս-
տերը կը գումարուին հետեւեալ խնդիրնե-
րու համբար:

Ա. — Բնտրութիւն հինգ⁽¹⁾ անգամէ բարի ացած
Քաղաքական Ժողովոյ:

Բ. — Համագումարական Քաղաքական Ժողովոյ:

Գ. — Համարառութիւն Քաղաքական Ժողովոյ:

Դ. — Ամբաստանութիւն Քաղաքական Ժողովոյ:

(1) Աղեքամթղիոյ համար՝ Քաղաք, ժողովոյ անդամոց
թիւը բարձրացուած է եօթնի: (Տես Բ. և Գ. վաներաթղթե-
րում մէջ):

- Ե. — Թեմական ելմտացոյցի հաստատութիւն։
 Զ. — Որ և է ծանրի խնդիրը զոր Քաղաքական Ժաղովն հարկ կը սեպէ Թեմական Ժաղովին հանել, կամ իրբ Գաւառական լնդհ. Ժողովին առաջուելիք խնդիր կուզէ նախագլնաւթեան ենթարկել։
- 15.— Թէ՛ Գաւառական և թէ Քաղաքական Ժողովներու ընտրելի են հայ ուղղափառ Եկեղեցւոյ զաւակ ազգայիններ, որք երեսուն տարեկան են, և տարեկան մէկ եգ. Ոսկի ազգայինուրք կը վճարեն, և ընտրողութեան համար հրահանդին սահմանած պայմաններն ունին և ըստ Սահմանադրութեան ընտրելութեան իրաւոնք կը վայելեն։ Գաւառական Ժողովին Ասենապետները և Ասենապիւները չեն կրնար Քաղաքական Ժողովի անդամ լինել։
- 16.— Քաղաքական Ժողովները կը միացնեն իրենց վրայ թեմին նկատմամբ Քաղաքական Ժողովոյ և Քաղաքին նկատմամբ Թաղական Խորհրդոյ գործառնութիւնները, և կը կատարեն միանդամայն թեմին վարչութիւնը և քաղաքին հաստատութեանց և կալուածոց մատակարարութիւնը։
- 17.— Քաղաքական Ժողովներ, եթէ հարկ դատեն, երկու օժանդակ Հոգաբարձութիւններ կը նան կազմել Եկեղեցւոյ և վարժարանի հա-

- մար, իւրաքանչիւրը երեքական անդամէ, որք ընտրողութեան պայմանները պիտի ունենան ըստ հրահանդի։ Քաղաքական Ժողովոյ անդամներէն սմանք կրնան Հոգաբարձութեանց մէջ ալ զանուիլ։ Ժառանգական և վիճակադրական և աղջահամարի գործերը Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կը պատկանին։
- 18.— Հոգաբարձութիւններ պատասխանառու են Քաղաքական Ժողովին և Քաղաքական Ժողովը պատասխանառու է Թեմական Ժողովին։
- 19.— Առաջնորդը կ'ընտրուի Օսմաննեան հպատակ կուսակիրօն Եկեղեցականներուն մէջէն, ուրիշ զաւառական Առաջնորդաց համար սահմանած սպալուսական հրահանդին համաձայն, Պատրիարքարանէ սուացուած արտօնութենէ ետքը, և Պատրիարքարանէ արւած եւանդուն բաց ցանկի վրայ։
- 20.— Առաջնորդական ընտրութիւնը կը վաւերացուի Ազգ. կեդր. Վարչութեան խառն Ժողովէն, և կը հաստատուի կայսերական հրավարատակավ և Պատրիարքական կոնդակով և տէղական իշխանութեանց ուղղուած ընծայտական յանձնաբարարագրով։
- 21.— Գաւառական կամ թեմական և վարչական Ժողովոց ընտրութիւններն ալ կը վաւերացուին Պատրիարքական կոնդակով։ Իսկ

- Հոգաբարձութեանց ընտրութիւնը կը վառերացուի Առաջնորդէն:
- 22.— Առաջնորդն երկու թեմերուն մէջ ալ կընտրէ մի մի եկեղեցական Առաջնորդական Փախանորդ վարչական Ժաղավին հաճութեամբ։ Փոխանորդները Առաջնորդին բացակայութեան կը վարեն Առաջնորդական Պարծերը, իրենց արաւած հրամանդին համեմատ և նշանակուած սահմանին մէջ։
- 23.— Կրօնական Ժաղավոյ պատկանեալ զործերը Առաջնորդը կը կարգադրէ Փոխանորդները եկեղեցական անդամներուն հետո ժողով գումարելով։ Իսկ եթէ ծանրակշխատ մի իրողութիւն կամ վերագրենաւթեան առիթ պատահի, երկու թեմերուն վոխանորդները և եկեղեցական անդամները ի միասին ժողովի կը գումարէ։ Կրօնալ նաև ի հարկին բոլոր Եփիպատոի եկեղեցականներէն համագումար ժողով գումարել։
- 24.— Նշանագութեան և պատկադրութեան հրամանիներն կը տրուին Առաջնորդէն, որ կը ընայ փոխանորդներն ալ արտօնել իւր բացակայութեան հրամանի տալու։
- 25.— Պատաստանական Խորհրդոյ վերաբերեալ խնդիրները կը քննուին Քաղաքական Ժողովէն, Թեմական Ժաղավի Եկեղեցական ան-

- դամներուն հետ միասին, Առաջնորդի կամ փոխանորդի նախագահութեամբ։
- 26.— Փոխանորդներ ի բացակայութեան Առաջնորդի կը նախագահեն վարչական ժողովներու։
- 27.— Առաջնորդի մահուան կամ հրաժարման կամ որ և պատճառով գաղարման առեն առժամեայ աեղապահը կ'ընտրուի երկու թեմերու վարչական ժողովներուն համախորհուրդ հաճութեամբ, և կը հաստատուի Ազգ։ Պատրիարքարանէ։
- 28.— Առաջնորդի հրաժարականը մինչև որ Ազգ։ Եեղը, Վարչութենէ չընդունուի վերջնական և լրացեալ չնկատուիր։
- Սոյն հրահանգը կը հաստատեմք և կը վաշերացնեմք և կը հրամայեմք ի գործադրութիւն։
- Ի Պատրիարքարանի կ. Պօլսոյ 2 Մայիս 1907
Պ. կ. Պօլսոյ
(Ստոր.) ՄաղաքիԱ Ա.Ր.Ք.

500

Առաջական աշխարհի ուժը մասնաւոր
էլեկտրական արդյունաբար
համական աշխարհի ուժը պարզաբանութեան
հայութ անձնագիր է և ապահովութեան ուժը

անձնագիր է Առաջական պարզաբանութեան
անձնագիր պահպանական է և ոչ առաջ
այլդ աշխարհի պահպանական
աշխարհ առաջական անձնագիր աղօքական
պահպանական է և պահպանական է ու առաջա

այլ աշխարհ պահպանական է պահպան
պահպանական աշխարհ պահպանական է ու առաջ
այլ աշխարհ պահպանական է պահպանական է ու առաջ

այլ աշխարհ պահպանական է պահպան
պահպանական աշխարհ պահպանական է ու առաջ

այլ աշխարհ պահպանական է պահպան

պահպանական աշխարհ պահպան

ՀՀ Ազգային գրադարան



NL0657126

